



ՀԱՅՈՑ ՏՈՄԱՐԻ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԻՆ ՀԱՅՈՑ ԳԼԽԱԽՈՐ ՏՕՆԸ*

Հին Հայոց Նաաաարդի տօնը, որպէս կարեւոր մշակութային իրողութիւն, տեսապէս եղել է քննութեան առարկայ շատ հետազօտողների համար: Եւ դա բնական էլ է, զի տօնը (այն էլ՝ գլխաւոր տօնը), որպէս ազգային մշակոյթի խտացում զրտւորում, իր մէջ պիտի ընդգրկէր հայ մշակոյթի համարեա բոլոր ճիւղերը և պատմական վայրուվերումների կնիքը: Այդուհանդերձ, ինչպէս հայ մշակոյթի շատ այլ աապարէզներում, այնպէս եւ այստեղ, բազմաթիւ հարցեր տակաւին վիճարոյց են, եւ շատ հարցեր էլ պարզապէս բաց են, ընդհանրապէս չեն քննուած:

Տարիներ առաջ, շարքիս մի յօդուածում աատղագիտական եւ տումարական քննութեամբ փորձել էի հիմնաւորել այն, որ հին Հայոց Նաաաարդի տօնը եղել է ամառնամուտի շրջանում, արեւադարձից մի շաբաթ առաջ (արդի օրացոցի հաշուարկով՝ յունիսի 14-ին): Արդ փորձենք այս տեսակիւնից քննել Նաաաարդի տօնը, և ըստ կարելոյն պարզել, թէ ինչ տօն է դա եղել (դրա իմաստը, ծէսերը, խորհուրդները, մնացորդները եւն):

Ինչպէս ժամանակին ցոյց էր տրուել¹, Հայոց Բուն օրացոյցը սկզբնաւորուել է Ն. Բ. 2341 թ. յուլիսի 4-ին (ըստ Յուլեան տումարի հաշուարկի), Հայկն համաստեղութեան գլխաւոր աատղի արեգակնային ամբարձման եւ Նաաաարդ ամսի մէկի զուգադիպութեան օրը: Այդ նոյն աատղագիտական երեւոյթով (այդ աատղի արեգակնային ամբարձումով) էլ, անկախ ամիսամսաթուից, որոշուել է Հայոց գլխաւոր անշարժ տօնը խնդրոյ առարկայ ժամանակներում:

* Այս շարքի նախորդ յօդուածի («Էջմիածին», 1995, թիւ Ա, էջ 48) նկարների մակագրութիւններն են. Ձախից աջ, վերից վար. Հայկն (Օրիոն) աատեղատումը Ալեսսանդրո Պիկոլոմինիի «Անշարժ աատղերի մասին» աալասից. 1540 թ.: Օձակիր (Օձակալ) համաստեղութիւնը եւ իր շրջակայքը ըստ Միխիթար Սեբաստացու «Աատղալից երկինք» քարտէզի (1749 թ.): Այստեղ պատկերները տրուած են «հայելային»՝ այնպէս, ինչպէս կ'երեւայ երկնոլորտը դրսից դիտողին: Հայկն համաստեղութիւնը եւ իր շրջակայքը ըստ Մ. Սեբաստացու «Աատղալից երկինք» քարտէզի (1749 թ.): Հին չինական եւ շումեր-աքքադական Նետ-Աղեղ համաստեղութիւնը Մեծ Ծուն աատեղատան տեղում:

¹ Գրիգոր Բրուտեան, Հայոց տումարի որոշ հարցերի մասին. Հայոց Բուն թուական, «Էջմիածին», 1985, թիւ Ա, էջ 51—57, թիւ Բ—Գ, էջ 72—80:

Ն. Բ. 2341 թուականին ամառային արեադարձը եղել է Յուլեան տոմարով յուլիսի 12-ին²: Այս ամսաթիւը միայն ութ օրով է տարբերում Նաւասարդի տօնի օրուայ համար ստացուած օրից: Պատահական է այսպիսի առնչութիւնը ամառնամուտի օրուայ եւ Նաւասարդի օրուայ միջեւ: Անշուշտ, կարելի է փորձել այդ ութօրեայ տարբերութիւնը բացատրել կամ պարզ ճոգադիպութեամբ եւ կամ՝ որպէս արդիւնք սխալի: Իսկ սխալը կարող էր բխել հէնց խնդրի բնոյթից (կախուած «ծագման պահ» հասկացութեան սահմանումից, դիտման եղանակից, տեղանքի մակերեւութային ու մթնոլորտային առանձնաչափութիւններից և այլ գործօններից): Սակայն նկատի առնելով, թէ խնդրոյ առարկայ ժամանակներում որքան մեծ կարեւորութիւն պիտի ունեցած լինէին ե՛ւ աստղի արեգակնային ամբարձման դիտումները, ե՛ւ էլ արեադարձի օրուայ աստղագիտական-դիտողական որոշումը (երկունսն էլ՝ կապուած հաւատքի, պաշտամունքի հետ), շատ քիչ հաւանական պիտի համարել, որ այդ օրերը որոշուէին ութօրեայ սխալով: Նկատենք, որ նշուած ժամանակներից (եւ ասելի վաղ շրջանից) մեզ հասած բազմաթիւ ժայռապատկերները, խեցիէ եւ բրոնզէ տարբեր գտածոները վկայում են, որ այդ ժամանակներում Հայկական Լեռնաշխարհում եղել է բաւական բարձր աստղագիտական մշակոյթ, մեծ նշգրտութեամբ իմացել են արեադարձային տարուայ, լուսնային ամսուայ տեւողութիւնները: Ըստ ասելի հաւանական է, որ այդ ութօրեայ տարբերութիւնը լինի հետեւանք ոչ թէ ռելէ սխալի, այլ բոլորովին տարբեր իրողութեան:

Յիշենք, որ հնուց եկող աւանդոյթի համաձայն, մեր օրերում եւս գըլխաւոր (քրիստոնէական) տօներին նախորդում են դրանց շաբաթապահքերը, որ տեւում են եօթն օր եւ սկսում են տուեալ տօնի (պահքի) **Բարեկենդանով**: Զատիկին էլ նախորդում է Մեծ Պահքը, որ տեւում է եօթ շաբաթ եւ սկսում է Բուն Բարեկենդանով: Այսինքն, ունենք տօնից 7 (կամ 7×7) օր առաջ տօնին նախապատրաստուելու, տօնը, փաստօրէն, եօթն օր առաջ սկսելու երեւոյթը: Սրան անելացնենք եւ այն, որ շատ վաղ ժամանակներից աւանդուած է բացառիկ վերաբերմունք եօթ թուի նկատմամբ: Այդ է վկայում նաեւ այն, որ «7» նշանակող բառը (Sep[h]t[em]) մայր հնդեւրոպական լեզուն փոխ է առել սեմական լեզուից³: Եւ այս թուի նկատմամբ այդ բացառիկ վերաբերմունքն էլ կարելի է բացատրել (ամենայն հաւանականութեամբ) միայն հաւատի, աշխարհայեացքի հետ կապուած նկատառումներով:

Արդ, նկատի առնելով սա, կարելի է աստ առկայ 8-օրեայ տարբերութիւնը համարել ոչ թէ 8, այլ 7-օրեայ, ընդունելով, որ կատարուել է միայն մէկ օրուայ սխալ: Այսինքն կարելի է համարել, որ Նաւասարդի տօնի օրուայ համար մեր ստացած ամսուաթիւը ամառային արեադարձից առաջ է եղել հէնց **7 օրով**: Իսկ մէկօրեայ սխալը, յատկապէս արեադարձի օրը որոշելու հարցում, անելի քան հաւանական է, նկատի առնելով քննարկուող ժամանակները: Այնպէս որ, սա բացառիկ լաւ համընկում է (միայն մէկ օրուայ սխալով, որ լիովին անտեսելի է, նկատի առնելով դարաշրջանը), եւ այս տեսակ ճոգադիպումը պատահական համարել չենք կարող: Ուրեմն,

² Ginzler F. Handbuch der mathematischen und technischen Chronologie, bd. 1—3, Leipzig 1906—1914 (նմանահանութիւնը՝ Leipzig, 1958), 6. 1, էջ 101:

³ Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс., Индоевропейский язык и Индоевропейцы, Тбилиси, 1984, стр. 875.

ստանց սխալուելու վախի, կարող ենք մեր ստացած ամսաթուից եզրակացնել, որ Հայոց Նաաաարդի տօնը եղել է ամառային արեադարձին, եւ տօնակատարութիւնն էլ սկսուել է արեադարձից 7 օր առաջ, Հայկի աստղի արեգակնային ամբարձման հետ (արդի օրացոյցով՝ յունիսի 14-ին):

Նաաաարդի տօնը ամառային արեադարձին

Աստղագիտական եւ տոմարական եղանակներով ստացուած ամսաթիւը յուշում է, որ Նաաաարդի տօնը իր բովանդակութեամբ եւ խորհուրդներով եւս պիտի կապուած լինի ամառնամուտին, եւ որոշ իմաստով լինի հէնց ամառնամուտի տօն: Նայենք, թէ ինչ ալ տուեալներ կարելի է գրուել ի հաստատումն այս եզրակացութեան:

Նախ նկատենք, որ պատմագրութեան՝ մեզ քննեալ տուեալները հնարարութիւն չեն տալիս անմիջականօրէն ստոյգ որոշելու, թէ հնում երբ է նշուել Հայոց Նաաաարդի տօնը (որպէս անշարժ տօն): Չկայ ուղղակի վկայութիւն այն մասին, թէ տարուայ որ օրերին էին տօնում Նաաաարդը: Եթէ Նաաաարդի տօնը համարենք կապուած Նաաաարդ ամսի մէկին, որ շրջիկ է, եւ առկայ պատմական վկայութիւնները քննենք ա՛յդ տեսանկիւնից, ապա բոլոր դէպքերում էլ կը ստանանք տաք ժամանակ, որ լիովին ընդունելի է Հայաստանի պայմաններում համաժողովրդական մեծահանդէս տօն կատարելու համար: Այդպէս է եւ Գրիգոր Լուսաւորչի ձեռքով Հայոց արքունիքի, զօրքի եւ ժողովրդի մկրտութեան պարագայում, որ ըստ Ագաթանգեղոսի, եղել է Նաաաարդի տօնի ժամանակ (Ագաթանգեղոս, ԾԺԸ): Ըստ ընդունուած ժամանակագրութեան, Հայոց դարձը եղել է 301 թուականին, երբ Նաաաարդի ամսի մէկը համընկել է Յուլեան սեպտեմբերի 12-ին, որ ամառ է:

Նոյնն է եւ Գնելի սպանութեան մասին Փաւստոս Բիզանդիի պատմածի պարագայում: Այս դէպքում էլ, ըստ Փաւստոսի, Գնելի սպանութիւնը եղել է Նաաաարդի տօնին, երբ արքունիքն ու զօրքը մեծ հանդիսութեամբ տօնում էին ազգային տօնը: Գնելի սպանութեան ժամանակ (~ 350 թ.) Նաաաարդի ամսի մէկը համընկել է Յուլեան օգոստոսի 30-ին:

Նաաաարդի տօնի մասին մի ալ (անուղղակի) վկայութիւնն էլ պահանուել է Գրիգոր Մագիստրոսի մի նամակում մէջբերուած՝ Արտաշիսեան վէպի կարճ հատումում. «Ո՛ր տայր ինձ զծովս ծխանի եւ զառաւօտն Նաաաարդի...»: Կասկածից վեր է, որ այս հատումում խօսքը Նաաաարդեան տօնի եւ դրա ծէսերի մասին է⁴: Այստեղ էլ վէպը կապում է Հայոց Արտաշէս Պարթեւ արքայի հետ: Դժուար է հիմա միանշանակ պնդել, թէ որ Արտաշէս արքան է դա: Ըստ այսօրուայ պաշտօնական մօտեցման, խօսքը վերաբերում է նախկինում Անտիոքոս Գ-ի ստրատեգ Արտաշէսին (Զարեհի որդուն), որ Ն. Ք. 189-ին Հայաստանի մեծ մասում ինքնիշխան թագաւորութիւն հաստատեց եւ մահացել է Ն. Ք. 160-ին: Իսկ ըստ Մ. Խորենացու (եւ ալ աղբիւրների) ուշադիր քննութեան Լ. Շահինեանի կազմած ժամանակագրութեան, սա պէտք է լինի Արտաշէս Ա Տիեզերակալը, որ Հայոց

⁴ Այդ մասին մանրամասն տե՛ս Գրիգոր Բրուտեան, Հայոց տոմարի որոշ հարցերի մասին. Գրիգոր Մագիստրոսի տոմարական հանելուկն ու Արտաշիսեան վէպի հատումը, «Էջմիածին» 1992 թ., թւ. Դ—Ե, էջ 95—118;

կեցութեան հիմքը նախ եւ առաջ **հացն է** եւ ոչ այլ բան: Այսինքն, բերքի տօնը պիտի նշանակի նախ եւ առաջ **հացի բերքի տօն**, ուրեմն՝ **ցորենի եւ գարու:**

Ընդհանրապէս հացաբոյսի (ցորենի եւ գարու) մշակութիւնը բացառիկ մեծ նշանակութիւն է ունեցել: Յապացոյց դրան մեզ են հասել հացի արարման տարբեր փուլերին վերաբերող աշխատանքային բազմաթիւ երգեր. վարի (գութանի) երգեր, ցանքսի, ցանքսը վատ եղանակից պաշտպանելու, քաղհանի, հնձի, հունձքը կրելու (սայլի երգ), կալի, աղացի եւ հացաթրխման երգեր: Եւ չմոռանանք, որ հացի արարման ծէսն էլ, ինքն ամբողջովին սրբագործուած է. սկիզբը՝ վարը սկսում է «Օրհնեալ է Աստուած...» խօսքերով: Վարը, որպէս զուտ արական զբաղում, երկրի բեղմնաւորման խորհուրդն ունի, իսկ աւարտն էլ՝ հացաթխումը թոնիրի մէջ դարձեալ սրբագործուած (զուտ իգական) զբաղում է: Թոնիրն ինքը սրբութիւն է եւ կրում է երկրի որովայնի-արգանդի խորհուրդ⁶: Այսինքն, հացի արարումը իր բոլոր փուլերով սկզբից մինչեւ վերջ կանոնականացուած-սրբագործուած է եղել եւ դիտուել է մարդու աշխարհ գալուն զուգահեռ:

Հայաստանում աւանդաբար կիրառուել (եւ կիրառում) է հացաբոյսերի մշակութեան երկու տարբերակ. աշնանացան եւ գարնանացան: Գարնանացան ցորենի հասունացումը տեւում է ~115 օր, եւ բերքը հասունանում է ամառուայ կէտերին, իսկ աշնանացանը հասունանում է հէնց ամառային արեւադարձի շրջանում (կան տարբերութիւններ, կախուած ցանքսի վայրի բարձրութիւնից)⁷: Ուշագրաւ է, որ աշնանացան ցորենի հասունացումը տեւում է 270 օր, որ մօտ ինն ամիս է, եւ շատ մօտ է մարդու սաղմի զարգացման տեւողութեանը (շուրջ 280 օր): Այսինքն, այս առումով եւս հացի արարումը զուգահեռ է մարդու աշխարհ գալուն եւ ըստ այդմ, պէտք է նկատի ունենալ հէնց աշնանացան ցորենը:

Արդ, տեսնում ենք, որ հացաբոյսի (ցորենի) հասունացումը, բերքահաւաքը խորհրդանշել է մարդու արարումը-ծնունդը (գուցէ եւ ընդհանրապէս Աշխարհի արարումը), որով եւ դրա աւարտը, կատարումը պիտի լինէր գլխաւոր տօն՝ տօն արարչագործութեան, ուստիեւ՝ գլխաւոր աստծու-Արարչի տօն: Ուրեմն, գլխաւոր տօնի ժամանակը պիտի համընկնի հացի բերքահաւաքին:

Ցորենի մշակութեան ունեցած բացառիկ կարեւորութիւնը հնագոյն ժամանակներից «վկայուած» է նաեւ երկնքում: Ի թիւս այլ համաստեղութիւնների, ունենք մի շարք պայծառ համաստեղութիւններ, որոնք սերտօրէն կապուած են հացի մշակութեան հետ: Երկնքի հիւսիսային կիսագնդում իրար մօտ դասաւորուած են **Սայլ** (Մեծ Արջ), **Միւս Սայլ** (Փոքր Արջ), **Եզող** (Եզնարած, Սայլապան) համաստեղութիւնները: Եզողի տակ, կենդանաշրջանի վրայ **Կոյս** կենդանակերպն է, որ աւանդաբար պատկերում է ցորենի հասկը ձեռքին: Սայլը հացի արարման կարեւոր փուլերից մէկի (խըր-

⁶ Թոնիրն իր խորհուրդով զուգահեռ է մկրտութեան արարանին: Հայաստանում դեռ մեր դարի սկզբներում էլ թոնրի վրայ մկրտութեան ծէս էր արում (նաեւ երդման), իսկ աւագանը, որ եկեղեցու հիւսիսային կողմում է, խորհրդանշում է եկեղեցու արգանդը, որից ծնում է քրիստոնէան:

⁷ Մինչեւ հիմա էլ Հայաստանի շատ վայրերում մարդիկ յիշում են, որ 1941-ին, երբ պատերազմը սկսուեց յունիսի 22-ին (արեւադարձի օրը), շատ շրջաններում գիւղերի տղամարդիկ դաշտերում էին՝ ցորենի բերքահավաքի:

այս միակ բացառությունը չի կարող ազդել ընդհանուր պատկերի վրայ, առանել էս, որ չի բացառում խաղողի վաղահաս տեսակների գոյությունը խոր անցեալում (տե՛ս ծանոթ. 14):

Ի մի բերելով ասուածը, գալիս ենք նրան, որ Նաաաարդի տօնը նոր պտղոց տօն լինելու համար հարկ է, որ լինէր տարեկան բերքահաւաքի սկզբում, եւ դրա համար էլ յարմարագոյն շրջանը Հայաստանում ամառնամուտին յարող շրջանն է (գարնան վերջ-ամռան սկիզբ): Ըստ այդմ, Ագաթանգեղոսի վերոբերեալ վկայութիւնը լիովին համաձայն է Նաաաարդի տօնի ժամանակի համար մեր ստացած արդիւնքին: Ի դէպ, նոյնն է եւ Ռ. Ն. Ակինեանի կարծիքը¹⁵:

Տեսնենք ուրիշ ինչ փաստեր ունենք Նաաաարդի տօնի այսպիսի դիրքի օգտին: Ըստ բան է պահպանուել Հայ ազգագրութեան մէջ: Այսպէս, տարբեր շրջաններում սովորութիւն է եղել Նոր Տարուն կէսգիշերին, կամ առաւօտ կանուխ գնալ աղբիւրը կամ գետը եւ **ջրին ընծայել ցորեն ու գարի** (կամ դրանցից շինուած բլիթ): Եղել են նոյնիսկ կանոնականացուած խօսքեր (երգեր) յատուկ այդ ծէսի համար.

«Քեզի կու տամ ցորեն, գարի

Դուն ա ինծի տու բարի

Ընորհաւոր Նոր Տարի»¹⁶:

Ջրերին ցորեն ու գարի ընծայելը անշուշտ պիտի նախապէս կապուած լինէր այդ հացաբոյսերի **բերքահաւաքի** եւ դրանց **օրհնութեան** հետ: Ընդհանրապէս ջուրը (Ջուր տարերքը) խորհրդանշն է, տեղն է Հայր Աստուծոյ, Արարչի¹⁷: Եւ ըստ այդմ, ջրերին ցորեն, գարի ընծայելը կը նշանակի գերագոյն Աստծուն՝ Արարչին ընծայ տալ (բնականաբար, Նրա օրհնութիւնը ստանալու համար): Սրան լրիւ ներդաշնակ է Ա. Մատիկեանի այն պնդումը, թէ «Հնդեւրոպական ազգերու քով առ հասարակ գերագոյն էակն էր պտուղներն ու հունձքն օրհնողը, ինչպէս նաեւ պանդուխտներու կամ օտարներու պաշտպանը»¹⁸: Անշուշտ, սա վերաբերում է նաեւ Հայերին եւ հարկ է Նոր Տարուն ջրերին ընծայող հացն ու հացահատիկը դիտել իբրեւ վերապրուկ այն նախնական կարգի, ըստ որի Նոր Տարին պիտի եղած լինի գլխաւոր աստծու կողմից առաջին բերքն ու բարիքն օրհնելու տօն:

Նաեւ բնական է, որ Նաաաարդի տօնը, որպէս գլխաւորն ու մեծագոյնը տարուայ բոլոր տօներից, ձօնուած լինէր հէնց գլխաւոր պաշտոնող էակին՝ Հայր Աստծուն, Արարչին, որի կարեւոր դերերից մէկն է եղել պտուղըն ու հունձքը օրհնելը: Աստ յիշենք, որ Նաաաարդի տօնը կապուած է եղել Հայկն աստղատան առաջնորդ աստղի ծագման հետ (այդ աստղի ծագումով է որոշուել տօնի օրը), իսկ Հայկն էլ երկնային պատկերն է եղել

¹⁵ Հ. Ն. Ակինեան, Հայոց եկեղեցական տարին եօթներորդ դարու սկիզբը, «Հանդէս Ամսօրեայ», 1947, սիւն 171—179, սիւն 173:

¹⁶ Եփր. վ. Պօղոսեան, Նոր Տարուայ Տօնը Հին եւ Նոր Հայոց քով, Վիեննա, 1952, էջ 39:

¹⁷ Նկատի են առնում բնութեան չորս տարերքները՝ Հող, Ջուր, Օդ, Հուր: Այս մասին տե՛ս ատելի մանրամասն՝ Գրիգոր Բրուտեան, Հայոց Տոմարի որոշ հարցերի մասին, Հայոց օրացոյցն ու երկնային լուսատուները, «Էջմիածին», 1995 թ., թիւ Ա, էջ 47—60 (56):

¹⁸ Հ. Ա. Մատիկեան, Կրօնի ծագումը եւ դիցաբանութիւնը ըստ համեմատական կրօնագիտութեան, Վիեննա, 1920, էջ 163:

հենց Հայր Աստուծոյ, Արարչի: Սա լաւ ներդաշնակում է տօնի ժամանակի եւ Հայկի աստղով այն որոշելու մասին մեր ստացած պատկերին:

Նաւասարդը ցորենի (գարու) հետ կապուած լինելու վկայութիւն է նաեւ Նաւասարդին յատուկ կերակուրը՝ **Հարիսան**: Այս պատուական կերակուրի պարտադիր բաղադրիչներն են **ցորենը եւ միսը**: Այս կերակուրն այնքան սերտ է կապուած Նաւասարդին, որ այն տեղերում, ուր Նաւասարդը կապուած է եղել երոպական տարեմտին՝ յունուարի մէկին, այդ օրը Հայոց համար պահք լինելով, հարիսան էլ ձեւափոխուել է, դարձել **Կաղանդի կորկոտ** (Սեբաստիայում), **Պահոց քէշկէկ** (Բալուում)¹⁹, եւ կամ՝ **Անուշապուր** (Պօլիս, Բիւթանիա), միշտ պահպանելով իր կարեւորագոյն բաղադրիչը՝ ցորենը:

Ամանորի ծիսական կարեւոր կերակուր է եւ յատուկ պատրաստուած կորակ հացը (կամ բաղարջը), որ մեծ մասամբ կոչուել է **Տարի**, եւ ոչի մէջ դրուած նշանով (մանր դրամ) որոշուել է Նոր Տարուայ բախտաւորը: Այստեղ էլ փաստօրէն գալիք տարուայ բախտը գուշակում է հացի միջոցով, որով դարձեալ հացը (ցորենը) այս տօնի ծէսերում ստանում է առաջնային կարեւորութիւն:

Ուշագրաւ մի սովորութիւն էլ սա է, որ շատ տեղեր (Խարբերդ, Երզնկա, Բալու, եւն) տեւական ջերմ ունեցող հիւանդներին Ամանորի նախորդ գիշերը (կամ օրը) աղբիւրի մէջ լողացրել են եւ ապա հիւանդը եղել է մօտակայ մի թթի ծառ եւ թուփ թափ տալ ձեւացրել: Ծառի տակից մի ուրիշը հարցրել է՝ ինչ ես անում: Հիւանդը թէ՛ թուփ եմ թափ տալիս: Ներքեւինը, թէ՛ բա այս ժամանակ թուփ կը լինի՞: Վերինը, թէ՛ իսկ այս ժամանակ ջերմ կը լինի՞: Սրանից յետոյ ջերմը ամաչում, թողնում-գնում էր²⁰: Այստեղ կարեւոր է հենց **թթի ծառը ելնելը եւ թուփ թափ տալը**: Աստ չքննելով թէ ինչ խորհուրդ ունի թթենին եւ թուփ թափ տալը, նկատենք, որ յունուարի մէկին կատարուող այս հին ծէսը էլի վկայում է, որ Ամանորը պիտի նախապէս ամառնամուտին եղած լինի, զի Հայաստանում (Արարատեան դաշտում) թուփը հասունանում է հենց ամառնամուտի շրջանում:

Այն, որ ձմեռուայ ցրտին կատարուող Ամանորի այս եւ այլ ծէսեր նախապէս ռեւէ աղերս չեն ունեցել ձմեռուայ հետ, այլ եղել են ամառային, վկայում է Համշէնում պահպանուած սովորոյթը, որով Նոր Տարուայ նախորդ օրը՝ դեկտեմբերի 31-ը կոչել են **Ծաղկամուտ**²¹: Նոյնի մասին վկայում է եւ հ. Ալիշանը²²: Բնական է, որ դեկտեմբերի 31-ը բնաւ յարմար չէ Ծաղկամուտ կոչուելու համար, երբ Հայաստանի բնութեան մէջ նմուշի համար իսկ ծաղիկ չկայ, իսկ ամառնամուտին նախորդող մէկ-երկու շաբաթները (այժմ՝ յունիսի 8—22) Հայկական լեռնաշխարհում իրօք ծաղկառատ շրջան է, երբ մայիսի անձրեւներից յետոյ բնութիւնը ամենուր նոխացած է տեւակ-տեսակ ծաղիկներով: Հենց այս ժամանակ էլ ծաղկում են վարդերի տարբեր տեսակները. վայրի վարդը՝ մասուրը, եփելու վարդը, եւն: Անելաց-տարբեր տեսակները. վայրի վարդը՝ մասուրը, եփելու վարդը, եւն: Անելաց-նենք նաեւ, որ վարդ եւ ծաղիկ իմաստները նոյն բառով են արտայայտ-

¹⁹ Գ. Ա. Գրիգորեան, Ազգագրագետ Սարգիս Քամալեան, «Պատմա-բանասիրական հանդէս», թիւ 117, 1987, թիւ 2, էջ 86—95, էջ 94:

²⁰ Եփր. վ. Պողոսեան, նշ. աշխ., էջ 66, 69, 75, 78:

²¹ Անդ, էջ 125:

²² Ղ. Ալիշան, նշ. աշխ., էջ 305:

վում պարսկերէնում, արաբերէնում²³, եւ հայերէնում էլ յաճախ այս բառերը պոխարինում են իրար (ինչպէս՝ վիճակի երգերում. ջան գեուլում, ջան ծաղիկ): Այնպէս որ **Ծաղկամուտ** նշանակում է նաեւ **Վարդամուտ**:

Նաւասարդի տօնի կապը ցորենի հասունացման ժամանակի հետ սուկայ է եւ հետեւեալ սովորութիւնում, որ երկար տարիներ եղել է մեր տանը: Մայրս (բնիկ կիլիկեցի) դեկտեմբերի վերջերին ամանի մէջ թաց բամբակի վրայ ցորեն էր ցանում (շատ խիտ), որը ծլում-կանաչում էր մինչեւ տարեվերջ: Եւ Ամանորի սեղանի կարեւոր զարդն էր լինում այդ ամանը՝ ցորենի կանաչ-թափշ բոյսերով:

Նաւասարդի տօնի ժամանակը ցուցանող ժողովրդական աւանդոյթներից յիշելի է եւ այն, որ Խաչենում ընդունուած է եղել, որ մինչեւ Նաւասարդ չի կարելի պսակ անել: Խաչենցիների կարծիքով Սուրբ Սարգիսից մինչեւ Նաւասարդ ժամանակամիջոցը «անիծուած» է համարուել հարսանիքի համար²⁴: Սրան զուգահեռ յիշենք, որ մեր օրերում էլ տակաւին կենդանի է (Երեւանում եւ շրջակայքում) մի սովորոյթ, ըստ որի չի կարելի պսակ անել մայիս ամսին, այսինքն, մինչեւ յունիս: Իրար զուգադրելով այս երկու ման աւանդոյթները, կը ստանանք, որ Նաւասարդի տօնը պէտք է եղած լինի **յունիս ամսին**: Սա եւս լաւ համընկնում է մեր ստացած արդիւնքին:

Վերը շարադրեալ (ու նաեւ շատ այլ) տուեալների քննութիւնը մեզ բերում է հետեւեալ համոզմանը, որ Նաւասարդի տօնի (Ամանորի, Կաղանդի) ծէսերի, աւանդոյթների բազմաթիւ վերապրուկներ վկայում են, որ Նաւասարդի տօնը նախնաբար եղել է ամառային տօն, տօնուել է ամառային արեւադարձի շրջանում, դրանից մէկ-երկու շաբաթ առաջ: Եւ այս արդիւնքը լրիւ ներդաշնակ է տոմարական-աստղագիտական եղանակով ստացուած արդիւնքին:

Այդուհանդերձ, կարող են լինել առարկութիւններ, ընդդէմ այս եզրակացութեան՝ հիմնուած այն բանի վրայ, որ կան ազգագրական եւ մատենագրական վկայութիւններ այն մասին, թէ Հայերը Նաւասարդը տօնել են ոչ թէ ամառնամուտին, այլ աշնանը, ձմռանը կամ գարնանը, եւն: Իրօք, Հայաստանի տարբեր վայրերում սովորութիւն է եղել Նաւասարդը տօնել աշնանը²⁵: Աւելի տարածուած է եղել ձմռանը, յունուարի մէկին տօնելը: Կան եւ վկայութիւններ գարնանամուտը տարեմուտ սեպտեմբերի մասին²⁶: Առանց մանրամասն քննութեան (տեղի սղութեան պատճառով) փորձենք կարճ պատասխանել այն հարցին, թէ ի՞նչ կերպ կարող էին յառաջանալ այս մօտեցումները, որո՞նք են սրանց ակունքները: Պարզ է, որ այս տարբեր մօտեցումները պիտի տարբեր էլ աղբիւրներ ունենան: Անկասկած է, որ Հայերը հնում չէին կարող միաժամանակ այդքան տարբեր տարեմուտեր ունենալ: Ուրեմն, դրանց ակունքները պիտի փնտռել Հայաստանից դուրս:

Յունուարի 1-ին տարեմուտ դնելը: Ամանորի այս դիրքը, որ կիրառուում է նաեւ մեր օրերում, հայ իրականութեան մէջ է մտել արեւմուտքից, Հռոմէական օրացոյցի ազդեցութեամբ ԺԷ դարից ոչ շուտ: Սրա հետ է Հա-

²³ Հր. Անտոեան, Հայերէն Արմատական բառարան, հ. Դ, Երեւանի Համալսարանի հրատարակչութիւն, Երեւան, 1979, էջ 317:

²⁴ Եփր. Պողոսեան, նշ. աշխ., էջ 47:

²⁵ Անդ., էջ 47—49, եւն:

²⁶ Տե՛ս օր Ա. Օդաբաշեան, Ամանորը Հայ ժողովրդական Տօնացոյցում, Հայ Ազգագր. եւ բանահիւսութիւն, հ. 9, էջ 5—72, ՀՍՍՀ ԳԱ, Հրատ. Երեւան, 1978. Էջ 12—15:

յաստան մտել եւ **Կաղանդ** անունը (իբր Ամանոր), որ գալիս է հռոմէական kalendae-ից (այդպէս է կոչուել ամեն ամսի սկիզբը՝ մէկը):

Աշնանը Նոր Տարի՝ Նաւասարդ տօնելն էլ գալիս է Հայերի միւս հաւանաններից: Բիզանդացիները սեպտեմբերի մէկին նշել են իրենց քաղաքական եւ եկեղեցական տարուայ սկիզբը: Նոյն կերպ եւ փ. 1493-ից մինչ 1700 թթ. ընթացքում Ռուսները իրենց Նոր Տարին սկսել են սեպտեմբերի 1-ից²⁷: Սեպտեմբերին է նաեւ Հրէից Նոր Տորին, որ սակայն կայուն տեղ չունի եւ փոփոխում է սեպտեմբերի 5-ից հոկտեմբերի 5-ի միջակայքում²⁸:

Այս դէպքում, եթէ Հրէական օրացոյցից փոխառւոյթունը այնքան էլ հաւանական չէ, ապա Բիզանդական եւ Ռուսական օրացոյցների ազդեցութիւնը շատ հաւանական է, յատկապէս, նկատի առնելով բիզանդացիների եւ ռուսների տեւական տիրապետութիւնը Հայաստանի արեւմտեան եւ հիւսիսային հատուածներում, որի ընթացքում կարող էր տիրողի օրացուցային աւանդոյթը փոխանցուել Հայերի որոշ հատուածների:

Գալով Նոր Տարին գարնանը (գարնանամուտին) դնելուն, այս մասին շատ է խօսուել հայագիտութեան մէջ: Այսպիսի տարեմուտ ունեցել են նաեւ Ռուսները մինչեւ 1493 թուականը, Պարսիկները Օմար Խայեամից մինչեւ ԺԹ դարը²⁹ եւ այլն: Սակայն հայագիտութեան մէջ այս կարգի պընդումների աղբիւրը այլ է: Կարճ նշենք, որ այսպիսի բոլոր վկայութիւնները բխում են միջնադարեան մատենագրական աղբիւրներից եւ ունեն մէկ ընդհանուր սկիզբ, որ է Աստուածաշունչը եւ առաջին դարերի աստուածաշնչեան մեկնութիւնները, որոնք էլ, իրենց հերթին, գալիս են հին-հրէական լուսնա-արեգակնային օրացոյցից: Եւ սա էլ, իր հերթին, փոխառուած է եղել Բաբելականից՝ Ն. Ք. Զ դարում³⁰:

Ամանորի մի դիրք էլ, որ վերջերս շատ է հղովում, օգոստոսի 11-ն է: Սա էլ գալիս է Յովն. Սարկաւագի օրացուցային բարեփոխումից. ամբողջովին Սարկաւագ վարդապետի ստեղծածն է եւ ուէլ այլ (հին, նախնական) հիմք չունի³¹:

Անշուշտ, ամառնամուտը տարեմուտ լինելու համար եւս կարելի է Հայոց հարեւանների մէջ փոխառութեան աղբիւրներ գտնել, ինչպէս հին Եգիպտացիները, հին Յոյները, ըստ Մեթոնի յօրինուած «Պարապեգմայի» եւ այլն: Սակայն խնդիրը միայն փախաւոր աղբիւր որոնել-գտնելը չէ, այլեւ դա հիմնաւորելը ուրիշ փաստերով: Տեսանք, որ Նաւասարդը ամառնամուտին լինելը հաստատում է բազմաթիւ ազգագրական եւ այլ տուեալներով, ինչը չենք կարող կրկնել աշնանը, ձմռանը կամ գարնանը Նաւասարդ տօնելու մասին: Այնպէս որ աշնանը, ձմռանը եւ գարնանը Նաւասարդ տօնելու մասին եղած սակաւ տուեալները կարող ենք սեպել լիովին բացատրելի՝ օտար փոխառութիւններով եւ դրանց գոյութիւնը բնաւ չի խանգարում մեր եզրափակութեանը, որ **Հայոց Նաւասարդի տօնը եղել է ամառային արեւադարձի շրջանում**:

²⁷ Հ. Ս. Բաղալեան, Օրացոյցի Պատմութիւն, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., Երեւան, 1970, էջ 212:

²⁸ И. А. Климишин, Календарь и хронология, «Наука», Москва, 1985, ст. 177—178.

²⁹ Հ. Ս. Բաղալեան, նշ. աշխ., էջ 212, 147—8:

³⁰ И. А. Климишин, նշ. աշխ., էջ 169—170:

³¹ Տե՛ս մանրամասն Գրիգոր Բրուտեան, Հայոց տոմարի որոշ հարցերի մասին, Հայոց Փոքր թուական (Սարկաւագադիր տոմար), «Էջմիածին», 1994, թի Դ—Ե, էջ 100—116;

Հայկի տօն եւ Արեւի տօն

Տօնի ժամանակը ստոյգ պարզելուց յետոյ հարկ է որոշել, թէ ինչ տօն է դա եղել, ինչի ձօնուած: Նախ նկատենք, որ տօնի ժամանակն ինքնին յուշում է, որ, լինելով ամառային արեւադարձի շրջանում, այն պիտի անպայման կապուած լինի Արեւի պաշտամունքի հետ: Միւս կողմից էլ յիշենք, որ այս տօնի օրը որոշուել է Հայկն աստեղատան գլխաւոր աստղի արեգակնային ամբարձումով: Փորձենք տեսնել, թէ ինչպէս են իրար ներդաշնակում այս երկու իրողութիւնները՝ ամառային արեւադարձն ու Հայկն աստեղատան ծագումը (Արեւի պաշտամունքն ու Հայկի պաշտամունքը):

Ե՛ւ Արեւի պաշտամունքը, ե՛ւ էլ Հայկի պաշտամունքը Հայաստանում ունեն շատ հին ու խորն արմատներ, երկուսն էլ վկայուած են սկսած հնագոյն ժայռապատկերներից մինչեւ մեր օրերը: Այս երկու հնագոյն պաշտամունքներն էլ այսօր տակաւին կենդանի են Հայերիս մէջ (արեւապաշտութիւնը՝ հայկական բազմաթիւ անէծքներում, մաղթանքներում, երդումներում եւն, իսկ Հայկի պաշտամունքը՝ թեկուզ հէնց «Հայ» անուան մէջ): Միեւնոյն ժամանակ, պարզ է, որ Հայկն ու Արեւը նոյնը չեն՝ իրարից տարբեր են: Ի՞նչ կերպ են իրար առնչում այս երկու հնագոյն պատկերացումները:

Ծարքիս նախորդ յօդուածում տեսանք, որ ըստ Հայոց աւանդական պատկերացումների, Հայկը կերպաւորել է Հայր Աստծուն, Արարչին, Արքային³²: Բնական է, որ, որպէս հայր, նա լինի նաեւ հայրը Արեւի: Այս նոյն յարաբերութիւնը վկայուած է եւ հայկական բազում հրաշապատում հեքիաթներում: Այստեղ էլ թագաւորի (հօր) փոքր որդին է, որ կարողանում է յաղթահարել բազում դժուարութիւններ եւ բերել իրենց երկրի փրկութեան (կամ հիւանդ հօր բուժման եւն) համար անհրաժեշտ անմահական ջուրը, հազարական հաւքը, խնձորը եւ վերստին կեանքի կոչել քար դարձած մարդկանց, մահամերձ հիւանդ հօրը, ծաղկեցնել չորացած պարտէզը եւն: Մի խօսքով, վերականգնում է խաթարուած նախնական կարգը, պատժում է չարին, դառնում փրկիչ: (Յետոյ էլ հայրը իրեն է յանձնում իշխանութիւնը եւ նա դառնում է թագաւոր): Արդ, այս կարգի հեքիաթներում թագաւորը նշանակում է Հայր Աստուածը, որ էլի գերագոյն իշխանաւորն է ամեն ինչի: Իսկ թագաւորի կրտսեր որդին զուգահեռը, նշանակն է Արեւի: Որ դա այդպէս է, փաստում է բազում զուգահեռներով: Նրա գլուխն ու նկոյթը (փոքր մատը) ոսկեգոյն են լինում, նա հրեղէն ձիերով հրաշքներ է գործում, բարձրանում երկինք, իջնում անդունդ (սրանք էլ Արեւի հրեղէն ձիերն են): Նա է, որ մտնում է ծովի տակ (մահանում է) կամ անցնում Աագ ծովը՝ փրկութիւնը բերելու համար (Արեւի մայր մտնելն է ծովից այն կողմ եւ ոսկի մակոյկով ծովն անցնելը եւն): Ի վերջո, նա է միայն, որ կարողանում է գտնել-վերականգնել կորսուած արդարութիւնը, որով եւ նոյնանում է արդարութեան Արեգակի հետ: Անշուշտ, զուգահեռներն այսքանով չեն սահմանափակում, բայց այդքանն էլ բաւական է համոզուելու համար, որ Հայկ-Հայր-Արարչի եւ Արեւի միջեւ պիտի լինի ճիշդ նոյն կարգի յարաբերութիւն ,ինչ որ կայ հեքիաթի թագաւոր-կրտսեր որդի զոյգի մէջ: Այսինքն, Արեւը Հայկի որդին է: Ի դէպ, այս առթիւ կարելի է յիշել, որ ըստ Խորենացու, Հայկի որդիներից մէկը եղել է **Խոռը** (Խորենացի, Ա, ԺԲ): Թէպէտ այս անունը ըստ Անտեանի անյայտ ծագում ունի³³, սակայն

³² Գր. Բրուտեան, *նշ. աշխ.*

սրան շատ մօտ խորեն անունը բացատրելիս Անտեանը յայտնում է, թե արմատն է պարսկական *xor* «արեգակ»³⁴: Եթե Հայկի որդի խորի անունը եւս կապուի այս նոյն՝ «արեգակ» նշանակող արմատին, դա եւս կը լինի վերոնշեալ մօտեցման մի դրսեւորում, ըստ որի Արեւը (խորը) Հայկի որդին է:

Արդ, նայենք, թե հայկական օրացոյցի պարագայում ինչ կերպ է դրսեւորում այս յարաբերութիւնը: Նաւասարդի տօնը սկսում է Հայկի աստղի արեգակնային ամբարձումով, որ աստղի առաջին առաւօտեան ծագումն է չերեւալու շրջանից յետոյ: Այսինքն, Հայկը չերեւալու շրջանից յետոյ առաջին անգամ երեւում է Արեգակի հետ, արեւածագին, երբ Արեւը երկնքում շարժուելով մօտենում է այդ աստղին: Եւ վերը նկարագրուած հեքիաթային անցքերն էլ ներդաշնակ են այս աստղագիտական անցքերին. աստղի չերեւալու շրջան-աղետ, այգու չորանալ, թագաւորի հիւանդանալ եւն, Արեւը Հայի աստղին մօտենալ-Արեգի՝ փոքր որդու վերադարձը, որից յետոյ՝ արեգակնային ամբարձումը՝ Հայկի աստղի վերստին երեւալը երկնքում—փրկութիւնը, չարի պարտութիւնը:

Այս առթիւ նկատենք, որ ըստ հաշուարկի, Հայոց օրացոյցի սկզբնաւորութեան ժամանակներում Հայաստանի տարածքից Հայկի գլխաւոր աստղի չերեւալու շրջանը տեւել է 70 օր: Ուշագրաւ է, որ այստեղ եւս ունենք Հայկի կապը 7 թուի հետ ($70 = 7 \times 10$), որ առկայ էր նաեւ աստղի ծագման օրուայ եւ արեւադարձի միջեւ (մէկ օրուայ սխալով միայն): Յիշենք նաեւ, որ եօթը Արարչին վերագրուող թիւն է եղել, եւ Հայր Աստծուն տրուած «է» անունն էլ թուական առումով եօթ է նշանակում եւ հայերէն է տառն էլ իր գծապատկերով նոյնանում է (գլխիվայր շրջուած) եօթին:

Տեսնենք, թե սրան աղերսուող ինչ ունենք հայկական ազգագրութիւնից: Ամենաակնառուն տարբեր տեսակի արգելքներն են, որ ըստ իս, անմիջականօրէն աղերսում են աստղի չերեւալու շրջանին եւ դրա իմաստին: Այսպէս, Խաչենում Սուրբ Սարգսից մինչեւ Նաւասարդ շրջանն անիծուած է համարուել պսակի համար: Սուրբ Սարգսի տօնը շարժական է եւ լինում է յունուարի 17-ից փետրուարի 21 միջակայքում: Եթե այստեղից հաշուենք մինչեւ Նաւասարդ (ամառնամուտ), կ'ունենանք ողջ գարունը (մի փոքր էլ ատելի): Այսինքն, ունենք պսակի գարնանային արգելք: Այս պարագայում ունենք, որ արգելքը (114 օրից ոչ պակաս) շատ ատելի է, քան աստղի չերեւալու 70 օրը, սակայն դա լիովին բացատրելի է, նկատի առնելով աւանդոյթի ալլափոխումները հազարամեակների ընթացքում: Ուշագրաւ մի արգելք էլ վերաբերում է Զատիկ-համբարձում միջոցին (40 օր): Այս շրջանում էլ կանայք երեկոները գործ չեն արել, որպէսզի «հաւկուր» չլինեն³⁵: Այս նոյն միջակայքում եղել է նաեւ արգելք ընդհանրապէս կաթնամթերքների օգտագործման վրայ (որպէսզի կովերի կաթը չպակասի): Իսկ Համբարձմանը պարտադիր է եղել կաթով շինուած կաթնապուր կամ սամիր: Ուշագրաւ է, որ այս արգելքներն էլ կապուած են անդրաշխարհի խորհրդանշների հետ (կով, կաթ, երեկոյ, կին), որ յուշում է դրա կապը Հայկի աստղի չերեւալու շրջանի հետ: Պէտք է մտածել, որ այս շրջանը նախապէս պիտի

³³ Հր. Անտեան, Հայոց անձնանունների բառարան, Բ. Բ, Երեւանի Համալսարանի Հրատ., Երեւան, 1944, էջ 528:

³⁴ Անդ, էջ 543:

³⁵ Ա. Մանուկեան, Հայ Եկեղեցու տօները, Թեհրան, 1994, էջ 159:

ընկալուած լինի իբր Հայկի (գերագոյն աստծու) Սանդարամետ իջնելը, Մուֆ Աշխարհում լինելը:

Ուրեմն, տեսնում ենք, որ Նաւասարդի տօնը իր խորհուրդներով կապուած է Հայր-Արարչի, Որդի-Արեւի, Սանդարամետից դուրս գալու, փրկութեան գաղափարներին:

Նաւասարդի տօնի բեկորները

Անկասկած է, որ բազմաթիւ դարեր Հայոց գլխաւոր հիմնական տօնը եղած Նաւասարդը չէր կարող անհետ կորչել: Նրա շատ տարրեր պահպանուել, մեզ են հասել իբրեւ ժողովրդական սովորութիւններ, ծէսեր, կապուած տարրեր տօների հետ: Նաւասարդի տօնի հիմնական բեկորները պահպանուել են Համբարձման, Վարդավառի, Խաղողօրհնէքի (նաեւ՝ Ծաղկազարդի) տօների ծէսերում ու սովորութիւններում, որոշ հետազօտողների կարծիքով, այս շարքում են նաեւ Տէրնդէզի հրավառութիւնն ու Բարեկենդանեան խաղերը³⁶:

Անկասկած, շատ բան Նաւասարդեան տօնից պահպանուել է հէնց յունուարի 1-ի հետ կապուած հայկական սովորութիւններում: Նշենք մի քանի հիմնականները: Նախորդող օրերին լրիւ մաքրել են տունը, տնից հանել-թափել անպէտք հնոտին: Ամանորի գիշերը, չնայած խիստ սառնամանիքին, շատերը լողացել են աղբիւրների, գետերի ջրերում, հաւատալով այդ ժամերին ջրերի ձեռք բերած հրաշագործ ուժին (դէկտեմբերի 31-ին լողանալու սովորութիւնը—բայց ոչ բացօթեայ—կայ եւ հիմա շատերի մօտ): Վերը նշուեց, այդ գիշեր աղբիւրների (ջրերին) ցորեն-գարի նուիրաբերելը: Աւելացնենք նաեւ իրար շնորհատրելը եւ նուէրներ տալը (հիմնականում պտուղներ): Սեղան է դրուել եօթ տեսակ միրգ, եօթ տեսակ կերակուր: Եղել է եւ **Տարի** հացը, որով որոշուել է տւորուայ բախտաւորը: Այս սովորութիւնները, որ կապուած են Նոր Տարուայ հետ, կարող ենք դիտել իբր անկասկած Նաւասարդից մնացած վերապրուկներ:

Արդ նայենք այն տօները, որոնք ուղղակիօրէն չեն առնչուում Ամանորին, բայց իրենց ծէսերով, սովորոյթներով ու խորհուրդներով, շատ սերտ աղերսում են Նաւասարդի հետ:

Առաջինը նայենք **Համբարձման** տօնը: Սա շարժական է եւ լինում է ապրիլ 30—յունիս 3 միջակայքում: Ժողովրդական անուամբ կոչուել է եւ **Վիճակ**, որ ցոյց է տալիս տօնիս ժողովրդական ծէսերի հիմնական բովանդակութիւնը: Այս վիճակախաղը, որ իգական սեռին է վերապահուած, ըստ էութեան անձի ապագայի, բախտի գուշակութիւն է (որն ի դէպ, բնաւ չի խրախուսում եկեղեցու կողմից), եւ որպէս այդպիսին, սերտօրէն աղերսում է Ամանորին (Նաւասարդին) պահպանուած գուշակութեան տարրերի հետ: Ամանորի (Նաւասարդի) հետ այս տօնի ընդհանրութիւնը նաեւ երկուսում էլ ջրի նկատմամբ եղած բացառիկ վերաբերմունքն է: Վիճակը, որով արւում է գուշակութիւնը, պատրաստում է եօթն աղբիւրից ջուր վերցնելով, եօթ ծաղկի մէջը դնելով: Ամանորի նման, Համբարձմանն էլ հաւատ կայ, թէ այդ **գիշեր** ջրերը մի պահ կանգ են առնում, դառնում հրա-

³⁶ Եփր. Պօղոսեան, նշ. աշխ. էջ 12—13:

շագործ. եւ այն գիշերային լոգանքները, որ կան Ամանորին, կան (նոյնիսկ առանել շատ) եւ Համբարձմանը³⁷:

Համբարձման տօնի սովորութիւններում սյահպանուած՝ Նաւասարդեան մեծ տօնի տարրերից է եւ այն, որ որոշ տեղեր ամանդոյթ է եղել այդ տօնին ուխտի գնալ եւ մատաղ անել³⁸: Հետաքրքիր է, որ որոշ տեղերում տարբեր ձեւերով այս տօնը աղերսուել է Յովհաննու Սուրբ Կարապետի պաշտամունքին (ուխտագնացութիւն նրա սրբավայրերը եւն)³⁹: Միեւնոյն ժամանակ, յայտնի է, որ Հայոց եւ հարեւան եկեղեցիները Սուրբ Կարապետի ծննդեան տօնը նշել են յունիսի 24-ին (որ շատ մօտ է Նաւասարդի համար մեր ստացած ամսաթուին՝ յունիսի 14-ին), եւ բացի այդ, յայտնի է, որ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը Նաւասարդի տօնի տեղակ, որպէս խափանիչ հեթանոսական տօնի, կարգեց հէնց Սուրբ Կարապետի եւ Աթանագիւնէի տօնը:

Յոյժ ուշագրաւ է նաեւ Համբարձման տօնի հետ կապուած **գիշերուայ խորհուրդը**, որով եւս այս տօնը շատ սերտ կապում է Նաւասարդի հետ, երբ կատարուել են գիշերային ծէսեր (աստղի արեգակնային ամբարձման դիտումը, որ եղել է գիշերուայ 10-րդ ժամին)⁴⁰: Համբարձման գիշերը սրբացուած է, ինչպէս Նոր Տարուայ գիշերը: Այս գիշեր էլ (ինչպէս Ամանորին) հոսող ջրերը մի պահ կանգ են առնում, դառնում հրաշագործ, բուժիչ, երկինքը ճեղքում է, բացում, երկինք-գետին իրար են գալիս, համբուրում: Այս գիշեր է, որ բացում է Մհերի դուռը, Մհերը դուրս է գալիս եւ ստուգում աշխարհի վիճակը եւն: Գիշերուայ հետ է կապուած եւ հէնց **Վիճակը**, որ պատրաստում է նախընթաց օրը եւ **գիշերը** դրում է «աստղունք»՝ բացօթեայ մի տեղ, որ աստղերը ներգործեն՝ դարձնեն հրաշագործ: Ի դէպ, այս վերջին սովորութիւնը փոքր տարբերութիւններով կայ նաեւ Յոյների եւ Պարսիկների մօտ⁴¹: Եւ միշտ էլ վիճակը աստղունքից հանում է **նախքան արեւածագը** (յիշենք Հայկի աստղի ծագելը արեւածագից առաջ): Նոյնիսկ Համբարձման երգերի մէջ շեշտուած է, որ հէնց գիշերն է Համբարձման տօնը.

«Այս գիշեր Համբարձում է,

Աղւորներու հարցում է...»⁴²:

Ի հակակշիռ սրան, նկատենք, որ Քրիստոսի համբարձումը գիշերուայ հետ կապուած չէ. ամեն դէպքում կանոնական գրականութեան մէջ Համբարձումը գիշերը լինելու մասին ոչինչ վկայուած չէ (Գործք, Ա, 4—11):

Աւելացնենք, որ Նաւասարդի տօնի հիմնական ծիսական կերակուրը՝ հարիսան, Հայաստանի որոշ վայրերում կոչուել է **գիշերեփեաց**⁴³:

Համբարձման տօնը Նաւասարդի հետ ընդհանրանում է նաեւ ցորենի-գարու նկատմամբ բացառիկ վերաբերմունքով: Համբարձման որոշ երգերի մէջ **Վիճակը** պահանջում է, որ իրեն տան «խորերով ցորեն» եւ «արտերով գարի»⁴⁴, որով սա կապում է Ամանորին **ջրերին** ցորեն ու գարի նուիրելու

³⁷ Եփր. վ. Պողոսեան, Համբարձման տօնը եւ Հայ ժողովրդի վիճակախաղը, Վիճակ, 1956, էջ 10, 54 եւն.:

³⁸ Անդ, էջ 13:

³⁹ Անդ, էջ 171, 170:

⁴⁰ Գր. Բրուտեան, «Էջմիածին», 1992, թ. Դ—Ե, էջ 95—118:

⁴¹ Եփր. Պողոսեան, Համբարձման տօնը..., էջ 65—65:

⁴² Անդ, էջ 40:

⁴³ Գ. Ս. Գրիգորեան, նշ. աշխ., էջ 93:

⁴⁴ Եփր. Պողոսեան, նշ. աշխ. էջ 78:

ծէսին (ի դէպ, Վիճակն էլ շինուած է բոլորի մէջ լեցուած **ջրից** ու ծաղիկներից):

Համբարձմանն է նաեւ «Սասնայ Ծռեր» դիցնավէպի սկզբնաւորումը Ծովինարի յղիանալը Կաթնով Աղբիւրի ջրից: Այսինքն՝ դիցնավէպի ե՛ւ սկիզբը, ե՛ւ էլ աւարտը (Մհերի ժայռի բացուելը) կատարում են Համբարձմանը:

Այս ամենը ցոյց են տալիս, որ Համբարձման օրը նախապէս պիտի ընկալուած լինի տարուայ բոլոր օրերից դուրս, տարուան չպատկանող (երբ տեղի էին ունենում «ժամանակից դուրս» իրադարձութիւններ): Իսկ տարուան չպատկանող օրեր եղել են տարեմութին նախորդող օրերը: Միջնադարում հայ տոմարագետները տարուայ ընդհանուր կարգից դուրս են համարել Աւելեաց հինգ օրերը, որոնք համարուել են արարչութեան օրեր:

Ի մի բերելով Համբարձման տօնի մասին մեր իմացածը, տեսնում ենք, որ **Համբարձման (Վիճակի)** տօնն իր բազմաթիւ կարեւոր խորհուրդներով, ծէսերով, սովորութիւններով ու հաւատալիքներով ոչ այլ ինչ է, քան **հիմնական բաղադրիչը Հայոց Նաւասարդեան մեծ տօնակատարութեան:**

Միւս տօնը, որ դարձեալ իրաւամբ համարուել է Նաւասարդեան տօնի մաս, **Վարդավառն է:** Սա էլ շարժական է եւ պատահում է յունիսի 28-ից օգոստոսի մէկի միջակայքում: Նախ նկատենք, որ Համբարձումն ու Վարդավառը Հայ Եկեղեցու տօնացոյցում դասաւորուած են այնպէս, որ դրանց փոփոխման միջակայքերը համաչափ են դասաւորուած Նաւասարդի օրուայ շուրջը: Այսպէս, Համբարձումը լինում է ապրիլ 30-ից յունիս 3 միջակայքում եւ սրա ու Վարդավառի միջակայքերի միջին կէտն է **յունիսի 15-ի**, որ արեւադարձից առաջ է եօթն օրով եւ Նաւասարդի (մեր ստացած) օրից տարբեր է միայն մէկ օրով: Դժուար է միանշանակ ասել, պատահակա՞ն է այս «գուգադիպութիւնը», թէ՞ ոչ: Ամեն դէպքում, եթէ նոյնիսկ դա պատահական համարենք, պիտի ընդունենք, որ այդ երկու քրիստոնէական տօներում ծուարած հին տօնի բեկորները պիտի նախապէս եղած լինեն ինչ-որ տեղ դրանց արանքում:

Ընդհանրապէս, ազգագրական բազում դրսեւորումներում այս երկու տօները (Համբարձում եւ Վարդավառ) հանդէս են գալիս որպէս իրար սերտօրէն շաղկապուած զոյգ (ասես՝ մի ամբողջութեան երկու կէտեր): Այսպէս, Կեսարիոյ եւ նրա որոշ գիղերի հայերը Համբարձման տօնը կոչել են Վարդավառ, իսկ Այալկերպութեան տօնն էլ, որ էլ Վարդավառի տօն է եղել, կոչուել է Սուրբ Կարապետ⁴⁵: Պահպանուած են եւ Ադանայի Համբարձման վիճակի երգեր, որ սկսուել են «Վարդավառ, Վարդավառ...» խօսքերով⁴⁶: Այնթապի եւ Մարաշի մէջ էլ Համբարձման տօնը կոչուել է **Մէնթիվար**, որ անկասկած Վարդավառ անուան աղաւաղումն է⁴⁷:

Այս նոյնի վկայութիւն է եւ այն, որ Վարանդաւի Աւետարանոց գիղում (ըստ Լէօշի) վիճակահանութիւնը տեղի է ունեցել Վարդավառի շրջանում, իսկ Ադանայի մէջ էլ վիճակախաղը **տարին երկու անգամ** է տեղի ունեցել. Համբարձմանն ու Վարդավառին⁴⁸: Այս երկու տօների՝ իրար ամուլ լինելը հաստատող այս կարգի փաստերը միայն նշուածներով չեն սահմանափակ-

⁴⁵ Անդ, էջ 186:

⁴⁶ Անդ:

⁴⁷ Անդ, էջ 181—182:

⁴⁸ Անդ, էջ 155, 184:

ում, բայց այսքանն էլ բաւարար է, համոզուելու համար, որ իրօք այս երկու ժողովրդական տօները բեկորներն են միեւնոյն նախնական տօնի:

Արդ, տեսնենք ինչեր ունենք պահպանուած Վարդավառի տօնի Նաւասարդեան բնօրինակից: Հիմնականը, որ պահպանուել է ցայսօր, բոլորն ջրախաղն է: Ուշագրաւ է, որ այս ջրախաղը կայ նաեւ Պարսիկների մօտ, ընդ որում, այդ՝ ջուր սրսկելու սովորութիւնը Պարսից մօտ մաս է կազմել **Նոր Տարուայ տօնակատարութեան**⁴⁹, եւ ըստ այդմ սպասելի է, Հայոց մօտ էլ ջրախաղը եղած լինի Ամանորին (Վարդավառը եղած լինի Նաւասարդին): Վարդավառին եղել են նաեւ գոմէշների կռիւներ, ինչպէս շատ տեղեր՝ Համբարձմանը (օր.՝ Մուշում եւ այլուր)⁵⁰: Վարդավառին սովորութիւն է եղել նաեւ ցորենի հասկեր բերել (ընծայել) եկեղեցի, որ բերքը անվնաս մնայ մորեխից եւ կարկուտից⁵¹: Ի դէպ, կարկուտը Հայաստանում լինում է հիմնականում յունիս ամսին: Եւ ընդհանրապէս պարզ է, որ բերքի պահպանութիւն Աստծուց խնդրելը իմաստ ունի նախքան բերքահաւաքը, որով Վարդավառի այս սովորութիւնն էլ յուշում է, որ այս տօնը նախապէս պիտի եղած լինի ցորենի բերքահաւաքից առաջ (կամ դրա ընթացքում), յունիս ամսին:

Վարդավառի ջրախաղը, որ արդ երբեմն կապում է Նոյի եւ Զրիեղեղի յիշատակի հետ, վկայութիւնն է այն բանի, որ այս տօնը ձօնուած է եղել գլխաւոր աստծուն՝ Հայր Աստծուն, զի ջուրը Հայր Աստուծոյ խորհրդանիշն է: Սրանով եւս Վարդավառը կապում է Նաւասարդին, որպէս գլխաւոր աստուծոյ տօնի:

Վարդավառի տօնի հետ կապուած մի կարեւոր սովորութիւն էլ պտուղի (ի մասնաւորի՝ խնձորի, խաղողի) վրայ եղած արգելքն է: Յայտնի է, որ Հայաստանի որոշ գաւառներում **Խաղողօրհնէքը** կատարուել է ոչ թէ Աստուածածնին (օգոստոսի կէսերին), այլ դրանից առաջ՝ Վարդավառին⁵²: Եղել է նաեւ մինչեւ Վարդավառ խնձոր ուտելու արգելք⁵³, որ խաղողի եւ ցորենի նկատմամբ այս տօնին եղած վերաբերմունքի հետ (ընծայում, օրհնութիւն) միասին վկայում է, որ Վարդավառը նախապէս եղել է նաեւ բերքի, պտղի ընծայման եւ օրհնութեան տօն: Աւելացնենք, որ Վարդավառին սովորութիւն է եղել իրար խնձոր (պտուղ) եւ ծաղիկներ նուիրելու⁵⁴, որ նոյնական է Ամանորին (Կաղանդին) իրար չոր պտուղներ նուիրելու եւ հէնց ա՛յդ նուէրներով շնորհաւորելու (կաղանդելու) սովորութեանը:

Նաւասարդեան տօնի ծէսերի ու սովորութիւնների միւս կարեւոր բեկորը, ամենայն հաւանակութեամբ, **Բարեկենդանեան խաղերն են**:

Այս տօնի ամենաէական դրսեւորումներն են ճոխ, հանդիսաւոր, կատակային **թափօրները**, **դիմակաւորում** խաղերը եւ անշուշտ, ճոխ, առատ կերութիւնում ու անսահման ուրախութիւնները: Եղել են նաեւ ձիարշաւ, սրախաղ եւ այլ խաղեր⁵⁵: Այս տօնի սովորութիւններից թերեւս ամենաստանգքայինը կարելի է համարել թափօրը: Սա այնքան արմատացած է եղել, որ

⁴⁹ Ա. Մանուկեան, նշ. աշխ., էջ 188:

⁵⁰ Անդ, էջ 188:

⁵¹ Կարօ Սուքիասեան, Անահիտ դիցուհին Հայոց, «Գարուն», 1986, թի 3, էջ 84—86:

⁵² Մ. Օրմանեան, Ծիսական բառարան, Անթիլիաս, 1957, էջ 31:

⁵³ Ա. ամանուկեան, նշ. աշխ., էջ 189:

⁵⁴ Անդ:

⁵⁵ Անդ, էջ 75:

կատարուել է նոյնիսկ վանքերում, ուր այդ օրը տեղի են տուել մշտական խառնությունները եւ նոյնիսկ տօնը կոչուել է **Աբեղաթող**: Վանքերում ուրախ սեղանին յաջորդել են գիշերային պարն ու թափօրը: Թափօրներն ընդհանրապէս (թէ վանքերում, թէ դրսում) ունեցել են թափօրապէտ՝ սուտ թագով ու գաւազանով, որոնք ցոյց են տալիս, որ սրա նախատիպը պիտի եղած լինի հէնց իսկական թագաւորը:

Յայտնի է, որ հանդիսաւոր թափօրները յատուկ են եղել Ամանորի տօնակատարութեանը տակաւին հին Միջագետքում, սկսած Շումերների ժամանակներից: Այստեղ էլ Ամանորի խաղերից նշանաւոր են Carnival-ը եւ Վիճակախաղը: Carnival-ը, որ զուգահեռն է մեր Բարեկենդանի, սկսուել է հանդիսաւոր թափօրով, տօնուել է գլխաւոր աստծու Մարդուկի՝ Ջրաշխարհից (Սանդարամետից) ցամաք՝ Լոյս Աշխարհ ելնելը: Ընդ որում Carnival անունն էլ կապում է դրա հետ, զի Մարդուկը Ջրաշխարհից ցամաք է ելել նաով, եւ նախ տակ էլ անիւներ են դրուած եղել (ցամաքում իբր կառք գնալու համար), որով եւ Car navalis=նաւակառք⁵⁶: Ի դէպ, տօնի հայերէն **Բարեկենդան** անունը եւս կարելի է կապել այս պատկերացման հետ, իբր Անդրաշխարհից (մեռեալների աշխարհից) վերադարձը (գլխաւոր պաշտօնող էակի) դէպի Լոյս Աշխարհ, որով Բարեկենդան կը նշանակի բարօք կենդանութիւն ստանալը (յարութիւն առնելը):

Ընդհանրապէս ընդունուած է Carnavla-ը համարել գարնանային պաշտամունքի հետ կապուած իրողութիւն⁵⁷: Նկատենք սակայն, որ անկախ գարնանը կամ տարուայ այլ եղանակին տօնուելուց, այս տօնահանդէսները կապուած են եղել հին տարին ճամփու դնելու եւ նոր տարին դիմաւորելու հետ: Այնպէս, որ Բարեկենդանեան խաղերը նախապէս կապուած պիտի լինէին ոչ թէ ինչ-որ եղանակի (ասենք՝ գարնան, կամ ամռան) հետ, այլ միայն՝ Տարեմտի, Ամանորի հետ: Բնական է, որ Տարեմուտը տեղափոխուելու պարագայում դրանք էլ կարող էին իրենց տեղը փոխել եւ տարբեր ազգերի մօտ լինել տարուայ տարբեր մասերում (կախուած Տարեմուտի դիրքից): Այսպիսով, Բարեկենդանի խաղերն էլ վերապրուկն են նախապէս Ամանորին կատարուող ծիսական թափօրների: Եւ Հայոց մէջ պահպանուած սովորութիւնն էլ՝ թափօրի գլխին անպայման սուտ թագ ու գաւազանով մի «թագաւոր» դնելու, յուշն է հնագոյն շրջանի թափօրների, որոնց գլխին պիտի լինէր ինքը՝ գլխաւոր, գերագոյն աստուածը (Հայր Աստուած-Հայկն), կամ նրա փոխանորդը, նրա տեղակալը երկրի վրայ՝ թագաւորը: Իր այս յատկանիշով Բարեկենդանը եւս սերտօրէն կապում է Նաւասարդի տօնակատարութեան հետ:

Գալով Բարեկենդանի կերուխումին, սա եւս սերտօրէն կապուած է Տարեմտի հետ: Իրօք, Հայոց եւ շատ ազգերի մէջ արմատացած պատկերացում է, թէ ինչպէս որ անցնի Ամանորի օրը, այնպէս էլ կ'անցնի յաջորդող ողջ տարին: Ահա, ըստ այս պատկերացման, պէտք է շատ կարեւոր լինէր Ամանորի օրը ճոխ, առատ, կուշտ ուտելը, որ տարուայ մնացած օրերը եւս մարդ անցկացնէր լիութեան, ուտելիքի առատութեան մէջ: Ի դէպ, մեր օրերում էլ Ամանորի կարեւոր պարտադիր բաղադրիչ է առատ սեղանը: Տա-

⁵⁶ Ա. Մատիկեան, նշ. աշխ., էջ 214: Սրան զուգահեռ է Յոյների Հելիոսը, որ Արեւի աստուած էր. սա էլ ծովն անցնում էր (երեկոյեան) մակոյկով, իսկ ցերեկը երկնքում ճամփորդում էր կառքով:

⁵⁷ Мифы Народов Мира, т. 1, Советская Энциклопедия, 1991, ст. 624.

որ նորապսակ փեսան ու հարսը հարսանեկան հանդերձներով ու նարօտով այս օրը դիմել են քահանային ,որ կրկնապսակ անի⁶²:

Այս տօնի ծեսերի ու սովորությունների նույնիսկ թոուցիկ քննութիւնը ցոյց է տալիս, որ դրանք կապուած են **Արեւի պաշտամունքի հետ**: Իսկ ծեսերում նորափեսաների ունեցած առանցքային դերը (խարոյկ վառելը) վերապրուկն է **թագաւորի** կողմից սկզբնաւորուող ու գլխաւորուող ծեսի (փեսայ-թագաւոր): Կրկնապսակ անելն էլ յուշում է, որ այստեղ առկայ է թագաւորի մասնակցութեամբ կատարուող հնագոյն **ծիսական ամուսնութեան** վերապրուկը:

Ծիսի միջոցով կատարուող գուշակութիւնն էլ յոյժ համահնչուն է հերթաւորու պաշտամունքի զոհասեղանից ելնող ծիսին վերագրուած բացառիկ կարեւոր դերին, որ վկայուած է Արտաշիսեան վէպի փոքրիկ հատուածում «Ո՛ր տայր ինձ զծուխ ծխանի, եւ զառաւօտն Նաւասարդի...»⁶³: Ինչպէս ցոյց է տուել այս վիպական հատուածի քննութիւնը, Նաւասարդի տօնին սրբազան գիշերուայ **Առաւօտ** ժամին կատարուել է կարեւոր ծես, եւ բացառիկ կարեւորութիւն է ունեցել ողջակէզի ծուխը, որ կոչուել է **ծուխ ծխանի**, եւ դրան վերագրուել է մեծ նշանակութիւն եւ զօրութիւն⁶⁴:

Ինչպէս տեսնում ենք, իր տարրերով (Արեւի պաշտամունք, թագաւորի մասնակցութեամբ ծես եւ ծիսական ամուսնութիւն, բերրիութեան գուշակում, հրավառութիւն եւն) այս տօնը եւս աղերսում է Նաւասարդի տօնին եւ դրա խորհուրդներին: Բացառութիւն չէ նաեւ տօնի անունը:

Այսպէս, տօնի անունը՝ **Տէրընդէզ** (**Տէրընդաս**, **Տէրընտաս**, եւն) աւանդաբար կապում է **Տիր** անուան հետ: Տիր աստուածը համարուել է **Հայր Արամազդի Գրիշը**: **Տիր** բառը պարսկերէն նշանակում է «**նետ**» եւ ըստ Ստ. Մալխասեանցի, **Տրէ** պահլաւերէն նշանակել է Ծնիկ աստղը (**Sirius**)⁶⁵: Միեւնոյն ժամանակ, բառիս «Տիրէնդազ» պարսկական ձեւը նշանակում է **նետաձիգ**⁶⁶: Յիշենք նաեւ, որ Հայր Աստուծոյ մի հիմնական զէնքը նետաղէղն է համարուել եւ Հայկն էլ ինքը նետաձիգ է, եւ Կենդանաշրջանում էլ Հայկի դիմաց իբր նրա նշանակներ՝ ունենք Կշիռ եւ Աղեղնաւոր, իսկ հէնց Հայկն աստեղատան տակ էլ հնում եղել է Նետ-Աղեղ աստեղատունը⁶⁷: Այսպիսով, տօնիս անունը եւս կապում է Հայկի-Հայր Աստուծոյ տօնին՝ Նաւասարդին:

Ստացում է, որ ե՛ւ իր ծեսերի խորհուրդներով, ե՛ւ էլ իր անունով այս տօնը եւս առնչում է Նաւասարդեան տօնակատարութեանը:

Իր ծեսերով ու խորհուրդներով Նաւասարդի հետ շատ սերտ աղերսներ ունի նաեւ **Ծաղկազարդի տօնը**: Ժողովրդի մէջ կոչում է նաեւ **Ծառազարդառ**: Հնում Հայոց մէջ սովորութիւն է եղել այս տօնին եկեղեցում ծառազարդարել եւ ճիւղերին պտուղներ ու այրուող մոմեր ամրացնել⁶⁸: Ծաղկազարդին ցարդ պահպանուած սովորութիւն է եղել ձիթենու, արմաւենու կամ ուռենու դալար ոստեր օրհնելը: Հնում սովորութիւն է եղել նաեւ Ծաղկազարդին հէնց եկեղեցում աղջիկ նշանելու (ծեսի ժամանակ): Այս տօնին

⁶² Ա. Մանուկեան, նշ. աշխ., էջ 59—70:

⁶³ Գրիգոր Բրուտեան, «Էջմիածին», 1992, թի Դ—Ե, էջ 112:

⁶⁴ Անդ:

⁶⁵ Տե՛ս Ա. Մանուկեան, նշ. աշխ., էջ 61:

⁶⁶ Անդ, էջ 62:

⁶⁷ Տե՛ս Գր. Բրուտեան, «Էջմիածին» 1995 թ. Ա, էջ 48, 53—54:

⁶⁸ Ա. Մանուկեան, նշ. աշխ., էջ 114—116:

ծառ զարդարելու սովորութիւնը (որից գալիս է եւ Ծառզարդար անունը) նոյնական է **Նոր Տարուայ Տօնածառին**, որ կայ շատ ու շատ ազգերի մօտ: Աւ ծառի մի երկուորեակն էլ Հայոց հարսանեաց ծէսում առկայ «թագաւորի ծառն» է, որ էլի զարդարում է պտուղներով (ի դէպ, հիմա էլ տօնածառի զարդ-խաղալիքների մեծ մասը կլոր-գնդաձեւ պտուղների նմանակներ են): Պտուղներով զարդարուն ծառը զարնանային պաշտամունքի հետ կապելը, ըստ իս, բաւական բռնազբօս մօտեցում է: **Հասուն պտուղներով** զարդարուն ծառը անելի յարմար է ոչ թէ գարնան զարթօնքի տօնին, այլ **ամառային առաջին բերքի** (Նոր պտղոց) տօնին: Եւ ըստ այդմ, դա անելի յարմար է Նառասարդին (Ամանորին), ինչպէս վերը տեսանք, ամառնամուտի շրջանում:

Ծառկազարդը Ամանորի հետ ընդհանրութիւն ունի նաեւ նրանով, որ այստեղ էլ, ինչպէս Ամանորին, սովորութիւն կայ, որ երեխաները թափօրով տնէ տուն են պտտում, երգում ու նուէրներ ժողովում:

Ուշագրաւ է եւ Ծառկազարդին աղջիկ նշանելու ասանդոյթը: Նշանելը փաստօրէն ամուսնութեան ծէսի մի մասն է, դրա սկիզբը, որով սա նմանում է Տէրընդէզի ծէսերին (կրկնապսակ են), ուր էլի մեծ դեր է խաղացնում պսակին:

Գալով Ծառկազարդի հիմնական սովորութեանը՝ դալար ճիւղեր օրհնելուն, սա կապում է անտարանական պատմութեան հետ: Ըստ Նոր Կտակարանի, երբ Յիսուս ասանակի վրայ նստած մտաւ Երուսաղէմ, ժողովրդի բազմութիւնը նրան դիմաւորեց **արմաւենու** ճիւղեր բռնած (Յովհ. ԺԲ. 13): Միս անտարանիչներն էլ վկայում են, որ Յիսուսին դիմաւորողները ծառերից ճիւղեր են կտրել եւ փռել նրա ճանապարհին, չնշելով, սակայն, թէ ինչ ծառի ճիւղեր են եղել (Մտթ. ԻԱ, 8, Մրկ. ԺԱ, 8): Նշում է նաեւ, որ դա եղել է Զիթենեաց լեռան զառիվայրի վրայ, եւ կարելի է մտածել, որ պիտի արմաւենու հետ եղած լինեն նաեւ ձիթենու ճիւղեր: Այսպէս, արմաւենու եւ ձիթենու ճիւղեր օրհնելը կապում է անտարանական պատմութեան հետ: Մինչդեռ ուռենու մասին անտարաններում ունի խօսք չկայ: Այնինչ, Ծառկազարդին մեզ մօտ օրհնում են ուռենու ռստեր, դեռ անելին, յայտնի է, որ ռուսները Ծառկազարդը կոչում են *Решае восток ест* և, ուր *Восток* նշանակում է **ուռի**: Այնպէս որ, ուռենին այս տօնում պատահական չէ:

Ո՞րն է ընդհանրութիւնը ձիթենու, արմաւենու եւ ուռենու միջեւ: Եթէ առաջին երկուսը պտղատու են, եւ դրանց պաշտամունքը (գուցէ) կարելի է բղխեցնել զուտ սպառողական նկատառումներից, ապա ուռին ո՛չ պտղատու է, ո՛չ էլ պիտանի փայտ է տալիս, ոչ մի առումով արժեքաւոր ծառ չէ: Ըստ իս, այս երեք ծառերի ընդհանրութիւնը նրանց տերեւների ձեւն է: Երեքի մօտ էլ տերեւները **սրածայր** են: Իսկ **սուր** (ծայրը) համարուել է Արեւի խորհրդանիշ: Յիշենք, որ Տէրընդէզի խարոյկն էլ վառում են անպայման փշով, եղէգնով կամ ծղոտով, որ էլի Արեւի նշանակներն են: Փուշը արդէն յայտնի է, որ **սուր** է, եղէգն էլ արմաւենու պէս երկար թրանման **սրածայր** երեւներ ունի, իսկ ծղոտն էլ, որ ցորենից է, կապուած է ցորենի **սուր-սուր** քիստերին: Այնպէս որ, Ծառկազարդին օրհնուող ծառերն էլ իրենց սրածայր տերեւներով խորհրդանիշն են Արեւի եւ կապում են Արեւի պաշտամունքի հետ: Եւ ըստ այդմ լրիւ բացատրելի է Անտարաններում վկայուածը Յիսուսին արմաւենու (եւ ձիթենու) ռստերով դիմաւորելու մասին: Զի Յիսուսին դիմաւորում էին որպէս **թագաւորի** (թագաւորն ինքը համար-

ում է Արեգակ) եւ բացի այդ, Յիսուս ինքն է Արեգակն արդարութեան: Աւելացնենք, որ հիւսիսային երկրներում, ուր չկան նշուած երեք ծառերը, տօնաձառ է դարձել եղեւնին, որ ասեղանման սուր տերեւներ ունի եւ հիմա էլ փշատերեւ Տօնաձառը կապուած է Ամանորի հետ:

Այս ամենը ցոյց է տալիս, որ Ծաղկազարդը նախապէս պիտի եղած լինի Արեւի տօն եւ եղած լինի ամառային արեւադարձին: Այս տօնի այլ յատկանիշների քննութիւնը եւս հանգեցնում է նրան, որ սա նախապէս եղել է ամառային, եւ կապուած է եղել Տարեմուտի հետ, սակայն կարծում եմ, այստեղ բերուած տուեալներն էլ բաւարար են համոզուելու համար, որ դա իրօք այդպէս է:

Նախքան ամբողջացնելը նշենք, որ կայ մի մեծ բեկոր եւս, Հայոց Նաւասարդեան տօնի, որ ոչ մի առանձին տօնի մէջ մտած չէ, այլ պահպանուել է, որպէս ժողովրդական կայուն ասանդոյթ, անկախ բոլոր տօներից: Դա է Հայոց **հարսանեաց ծէսը**: Իրօք, Հայոց հարսանեաց ծէսը, որ իր բազմաթիւ տարրերով հասել է մեր օրերը, պարունակում է շատ բաղադրիչներ, որոնք շատ սերտօրէն կապուած են Նաւասարդի հետ: Այսպէս, ամբողջ հարսանիքն ինքը տեսում է **7 օր**: Այս 7 օրը լրիւ համահնչուն է Նաւասարդը արեւադարձից 7 օր առաջ սկսելուն, եւ 7 օր տներուն: Հարսանեաց ծէսի բոլոր 7 օրերն ունեցել են իրենց յատուկ գործողութիւնները, կապուած տուեալ օրուայ խորհուրդի հետ: Յիշենք հարսանեաց ծէսի ամենակենտրոնական մասը՝ հանդիսաւոր թափօրը փեսայի ու հարսի (թագաւորի ու թագուհու) գլխաւորութեամբ: Սա լրիւ զիգահեռն է Ամանորի տօնի առթիւ հնում կատարուած ծիսական հանդիսաւոր թափօրների, որոնց գլխաւորն անպայման եղել է թագաւորը (նոյն ինքը՝ գլխոր քուրմը): Սրա հետ եւ ծիսական ամուսնութիւնը, որ էլի կատարուել է Նոր Տարուայ ծէսերի շարքում տակաւին շատ վաղ ժամանակներից՝ Միջագետքի եւ շրջանի այլ ժողովուրդների կողմից: Ծիսական ամուսնութիւնը յայտնի է տակաւին Ծումերների մշակոյթից, ուր մեծ հանդիսութեամբ ամեն տարի նշուել է **Ինաննիայի եւ Բովիւների** աստուած Դումիզի ամուսնութեան ծէսը, որ գլխաւորել է անձամբ թագաւորը: Եւ ծէսի ամենակարեւոր մասն էլ եղել է թագաւորի եւ Ինաննա աստուածուհուն ներկայացնող քրմուհու սրբազան կենկացութիւնը, որի յաջող արդիւնքից էլ կախում է եղել տարուայ յաջող բերքը⁶⁹: Ի դէպ, Ինաննա աստուածուհին նոյնացում է եղել եւ **Արուսեակ** մոլորակի հետ⁷⁰, եւ հայերէն **հարս** բառն էլ, ըստ երեւոյթին, կապուած է **Արուսեակ** անուան հետ⁷¹: Նոյն կերպ եւ Ծումերների Դամու աստծու հետ կապուած մեռնել-

⁶⁹ Мариан Белицкий, Забытый мир Шумеров, «Наука», Москва, 1980, стр. 254—260.

⁷⁰ Տե՛ս օր. Мифы Народов Мира, т. 1, стр. 510.

⁷¹ Հարսն բառն ըստ Աճառեանի, բնիկ հայկական է (Հայերէն Արմատակ: Բնութաբանութիւնը եւ իրանական փոխառութիւնը (Արմատակ, հ. 1, էջ 333, նաեւ՝ Գ. Զահուկեան, Այդուհանդերձ, չի բացառում, որ Արուսեակ մոլորակն իր անունը ստացած լինի, նկատի առնելով այն կերպաւորող աստուածուհու **հարս** լինելը: Աւելացնենք նաեւ, որ հայերէն «հարս» բառը ընդհանուր է շումերական archus «արգանդ» բառի հետ (Մ. Գաւուրճեան, Հայ ժողովրդի ծագումը, Մոնթրէալ, 1982, էջ 10): Ընդ որում, շումերական բառն ի՞նչ ձեւով շատ մօտ է եւ Արուսեակ անուանը: Չվիճարկելով լեզուաբանական եզրակացութիւնների նշողութիւնը՝ նկատենք, որ այս բառերի մէջ իր իմաստով անխնականը շումերականն է՝ «արգանդ», որից էլ կարող էր առաջ գալ «հարս» իմաստը, ապա եւ՝ մոլորակի անունը:

յառնելը նշանակող ծէսերը եւ ծիսական ամուսնութիւնը ամբողջ մի հազարամեակի ընթացքում եղել են շումերական պաշտամունքի **հիմնական** ծէսերը (որ բնաւ չի նշանակում, թէ դրանից յետոյ այդ ծէսերը վերացել են): Ի տարբերութիւն Դումուզիի, որ հովիւ է, Դամուն երկրագործ է, եւ նրա պաշտամունքը աղերսում է հէնց երկրագործական մշակոյթին⁷²:

Յիշենք նաեւ վերը յիշատակուած՝ մինչեւ Նաւասարդ եղած ամուսնութեան արգելքը եւ դրան զուգահեռ՝ մինչ Վարդավառ (կամ Աստուածածին) խնձոր ու խաղող ուտելու արգելքը: Մի դէպքում ունենք բերքի (ցորենի, գարու եւ պտուղների) ընծայում եւ օրհնութիւն Նաւասարդի տօնին, եւ դրա համար էլ բնական է, որ մինչ այդ ընծայումն ու օրհնութիւնը պիտի եղած լինէր համապատասխան արգելք (առանց այդ արգելքի մեծապէս իմաստազրկում են ընծայումն ու օրհնութիւնը): Միւս դէպքում էլ ունենք ամուսնութեան արգելք մինչեւ Նաւասարդ եւ այդ տօնին էլ՝ հանդիսաւոր թափօր՝ յար եւ նման պսակի թափօրին: Ունենք նաեւ ծիսական ամուսնութեան վկայութիւն (Ամանորին) հարեւան ազգերի մօտ: Այս ամենից կարելի է հետեւեցնել, որ պիտի Հայոց Նաւասարդի տօնակատարութեան օրերն էլ եղած լինեն ծիսական ամուսնութեան օրեր եւ ընդհանրապէս՝ ամուսնութեան-պսակադրութեան համար տարուայ մէջ որոշուած հիմնական ժամանակը:

Հայոց Նաւասարդի տօնի մի շատ էական առանձնահատկութիւնն էլ եղել է այն, որ այս տօնի ծէսերում, սովորութիւններում (ուրեմն՝ նախապէս եւ կանոններում) յոյժ մեծ կարեւորութիւն է մեցել **7 թիւը**, որպէս խորհրդանշական իրողութիւն:

7 օր է եղել տօնի օրից մինչեւ արեւադարձ, տօնին նախորդել է պաշտամունքի առարկայ աստղի չերեւալը $7 \times 10 = 70$ **օր**: Բացի այդ կայ եւ **7 տեսակ միրգ**, **7 տեսակ կերակուր** սեղան դնելը, որոշ տեղեր Կաղանդը կոչել են **եօթը օղիի օր**⁷³: Նոյնը ունենք եւ Համբարձման ծէսերում, ուր վիճակը պատրաստուել է **7 աղբիւրից ջուր** գողանալով, **7 տեսակ ծաղիկ** աւելացնելով: Նոյն կերպ էլ հարսանեաց ծէսում, ողջ ծիսակարգը բաժանուած է **7 օրուայ**: Այս ամենը եւս վկայում են, որ այս բոլոր տօներն ու **ծէսերը** բեկորներն են միեւնոյն նախնական տօնի, Նաւասարդի տօնի:

Հայոց Նաւասարդի տօնը

Այսպիսով, ի մի հաւաքելով Հայոց հնագոյն գլխաւոր տօնից մեզ հասած բեկորները, փորձենք ըստ հնարատրին վերականգնել այդ մեծ տօնակատարութեան նախնական պատկերը: Անշուշտ, այս «վերականգնումը» կարելի է անել միայն շատ կոպիտ մօտաւորութեամբ: Խօսքը վերաբերում է տօնիս **որակական պատկերի** վերականգնմանը:

Արդ, ըստ վերը կատարուած քննութեան, հայոց Նաւասարդի տօնը իր սկզբնաւորման ժամանակներում եղել է բազմօրեայ տօնակատարութիւն (իրար ագուցուած տօներով): Կատարուել է ամառային արեւադարձի շրջանում: Տօնակատարութեանը նախորդել է 70-օրեայ նախատօնական նա-

⁷² Мифы Народов Мира, т. 1, стр. 193—194.

⁷³ Էփր, Պօղոսեան, Նոր Տարուայ տօնը..., էջ 69, 46:

խապատրաստական շրջան, կապում Հայկի աստղի չերեալու հետ, որ ընկալուել է, որպէս Հայկի-Հայր Աստուծոյ Անդրաշխարհ-Սանդարամետ իջնելը⁷⁴: Այս շրջանում կատարուել են տարբեր ծէսեր, եղել են տարբեր արգելքներ, կապում Անդրաշխարհի եւ դրա խորհրդանիշերի հետ: Ի մասնաւորի, չի գործածուել կաթնամթերք, մայրամուտից յետոյ, կանայք չեն գործել, արգելուել է ամուսնութիւնը եւն: Այս 70 օրերի սկիզբը եղած պիտի լինի (ըստ արդի օրացոյցի) ապրիլի 5-ին: Արգելքի շրջանն էլ սկսուել է երկուշաբթի օրով եւ այդ օրը կատարուել է Անդրաշխարհի հետ կապում ծէս, եփուել է բակլայ եւ ճաշակուել, իբր նշան սգո, թաղման: Արգելքի այս 10 շաբաթներին յաջորդել է բուն Նաւասարդեան տօնակատարութիւնը, որ տեւել է 7 օր: Սկսուել է ամառային արեւադարձից մի շաբաթ առաջ եւ ընթացել մինչեւ արեւադարձ: Դատելով տօների խորհուրդներից, այս տօնակատարութիւնը եւս սկսուել է երկուշաբթի օրով եւ աւարտուել է կիրակիով (արեւադարձի օրը պէտք է յարմարեցուած լինէր կիրակիին՝ Արեւի օրուան):

Այս տօնական շաբաթուայ բոլոր օրերը ձօնուած են եղել համապատասխան աստուածների, եւ իւրաքանչիւր օրում նշուել է համապատասխան տօնը: Տօնական շաբաթը սկսուել է Անդրաշխարհին վերաբերող տօնով, կատարուել են արարողութիւններ՝ կապում Սանդարամետի խորհուրդների հետ (կապում՝ Անդրաշխարհից Հայկի դուրս գալու հետ): Այդ օրուայ գիշերը եղել է սրբացում, կատարուել է գիշերային ծէս, հսկել են, որ տեսնեն Հայկի աստղի առաջին անգամ ծագելը Արեւից առաջ: Դա էլ տեղի է ունեցել գիշերուայ **Առաւօտ** ժամին, կատարուել է զոհաբերութիւն (կով, ցով) եւ զոհասեղանի ողջակէզի ծուխն էլ կոչուել է **ծուխ ծխանի**, ունեցել է մեծ կարեւորութիւն, այդ ծխով կատարուել են գուշակութիւններ եւն:

Տօնակատարութեան կենտրոնը՝ 4-րդ օրը ձօնուած է եղել Հայկին—Արարչին: Այդ օրը կատարուել է հանդիսապար թափօր թագաւորի եւ թագուհու գլխաւորութեամբ: Այդ օրը (կամ յաջորդ օրը) եղել է բերքի երախայրիքի ընծայում Աստծուն: Ընծայուել է առաջին հերթին նորահաս **ցորեն**, **գարի** ու նաեւ՝ վաղահաս սլտուղներ (խնձոր, խաղող, գուցէ եւ ծիրան, թուփ, եւն): Տեղի է ունեցել բերքի հանդիսաւոր օրհնութիւն, որից յետոյ միայն արտօնուել է այն ճաշակել: Եղել է եւ պարտադիր ծիսական կերակուր՝ **հարիսան**, որ եփուել է ցորենով (կամ գարիով) եւ զոհաբերում կենդանու մսով (այդ օրուայ զոհի կենդանին երեւի պէտք է եղած լինի ուլը, կամ գուցէ եղջերուն): Տօնակատարութեան 6-րդ օրը՝ շաբաթ, եղել է ծիսական ամուսնութիւնը, որ կատարել է թագաւորը:

Տօնակատարութեան 7-րդ օրը՝ կիրակի, որ եղել է հէնց արեւադարձի օրը, ձօնուած է եղել Արեւին: Այդ օրը Արեւը հասել է իր ամենաբարձր դիրքին երկնքում իր տարեկան պտույտի ընթացքում:

Պահպանում եւ մեզ հասած պատմական տեղեկութիւնները եւ ժողովրդական սովորութիւնները վկայում են, որ Նաւասարդեան տօնակատարութիւնը կատարուել է բացօթեայ, բնութեան գրկում: Ընդ որում, այդպէս եղել է սկզբից եւեթ, եւ այդպէս շարունակուել է ընդհուպ մինչեւ այդ տօնի խափանումը Գրիգոր Լուսաւորչի սահմանած տօներով:

⁷⁴ Յայտնի է, օրինակ, որ Ծումերների դիցարանում ամենամախնական շրջանում Վեոնող-յաոնող յատկանիշ է ունեցել **Էնիլ** գլխավոր աստուածը, որ իջել է Սանդարամետ եւ աւա եղել Լոյս Աշխարհ, յարութիւն առել (տե՛ս, Мифы Народов Мира, т. 2, ст. 663, նաեւ՝ М Белицкий, нз. աշխ. էջ 191, եւն):

Նաասարդի բացօթեայ տօն լինելը, ըստ երևույթին, կարելի է դիտել իբր վկայութիւն այս տօնի շատ մեծ վաղեմութեան, եւ դա կատարողների աանդապահութեան: Իրոք, մի ժողովուրդ իր գլխաւոր բազմօթեայ տօնը բացօթեայ կը կատարէր, եթէ չունենար, կառուցուած չլինէր տաճարներ (այդ տօնը սահմանելու ժամանակ), իսկ դա էլ պիտի եղած լինի շատ վաղ անցեալում, երբ տակաւին ձեւաւորուած չէր պաշտամունքային շինարարութեան աւանդոյթը⁷⁵:

Աստ ներկայացածը միայն համառօտ ուրուագիծն է Նաասարդեան տօնի հանդէսների պատկերի, որ կարելի եղաւ փութանակի վերականգնել մեզ հասած քեկորների համադրմամբ: Անշուշտ, այս տօնակատարութեան ընթացքում (դրանից առաջ եւ գոցե յետոյ) պիտի եղած լինեն նաեւ այս տօներ, որոնց դիրքը, խորհուրդները եւ ծէսերը կարելի պիտի լինի վերականգնել, կատարելով աւելի հանգամանաւի քննութիւն:

ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏԵԱՆ

⁷⁵ Սրա հետ համահնչուն է Հրէաների կրօնի նախնական շրջանը: Յայտնի է, որ մինչեւ Տաճարի կառուցումը Սողոմոնի կողմից, Հրէաներն իրենց կրօնական պէտքերը հոգում էին, ծէսերը կատարում բացօթեայ եւ իրենց սրբութիւններն էլ (ուխտի տապանակը եւն) պահում էին շարժական խորաններում (վրաններում): Այնպէս որ սա եզակի երևույթ չէ: Այնպէս որ կարող ենք մտածել, որ հայերի մօտ էլ հնագոյն ժամանակներից եղել է տօնը բացօթեայ տօնելու աւանդոյթը, որ աւանդապահ ժողովուրդը պահպանել է հազարամեակներ եւ մեծ նախանձախնդրութեամբ անցկացրել հեթանոսական, ապա նաեւ՝ քրիստոնէական շքեղ տաճարների կողքով ու հասցրել մինչեւ մեր դարը:

